11558

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0140-23

Ձեռնարկողը՝ **«Էմ Ջի Է Քոնսթրաքշն» ՍՊԸ**
ք. Երևան, Վարդանանց փողոց, տուն 101

Գործունեությունը՝ ***Արարատի մարզի Մասիս համայնքի Արգավանդ բնակավայրի Սարալանջի 23 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0140-23

« 09 **»** 08 **2023թ.**

«Էմ Ջի Է Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Արգավանդ բնակավայրի Սարալանջի 23 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Էմ Ջի Է Քոնսթրաքշն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Վարդանանց փողոց, տուն 101

Ներածական մաս. Բնակելի համալիրի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզ, Մասիս համայնք, Արգավանդ բնակավայր, Սարալանջի փողոց, 23 հողամաս հասցեում, իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համաձայն Ճարտարապետահատակագծային առաջադրանքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքից 13կմ հյուսիս՝ Երևան-Էջմիածին խճուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 27 կմ հեռավորության վրա: Բնակավայրը ընկած է Հրազդան գետի աջ ափին: Ծովի մակարդակից ունի 877 մ բարձրություն: Հողամասի մակերեսը 0,42հա է: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ա. Բաբաջանյան փողոցին կից՝ Հյուսիս-հարավ ճանապարհին հարող՝ անօգտագործելի քարքարոտ հատվածում: Տարածքում կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ կապված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հետ: Բազմաֆունկցիոնալ և

բազմաբնակարան շենքերով բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Արարատի մարզի, Մասիս համայնքի, Արգավանդ բնակավայրի Սարալանջի փողոց հողամաս 23 հասցեում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 4200քմ: Ծավալատարածական լուծումը տերասաձև է՝ 9-11 հարկ: Նախատեսվում է իրականացնել օգտագործվող, կանաչապատ տեսարաններ: Ստորգետնյա հարկում նախատեսվում է ավտոկայանատեղի և սպորտային մաս՝ լողավազանով: Ավտոկայանատեղին նախատեսված է բնակիչների 70-80%-ի համար: Առաջին հարկում նախատեսված է բնակելի հարկերի մուտքային հանգույցներ և հասարակական նշանակության սենքեր: Հաշվի են առնվել հակահրդեհային նորմերը: Երեսապատումը իրականացվելու է բարձրորակ նյութերով: Նախատեսվում է կառուցապատել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Բնակելի համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են՝

- հողամասի ընդհանուր մակերեսը՝4200քմ(100%),
- կառուցապատման մակերեսը հողի վրա՝ 2016մ2(48%),
- անջրանցիկ մակերես՝ 504քմ(12%),
- կանաչապատման մակերեսը 1680քմ(40%),
- բնակարանների քանակը՝ 186 բնակարան,
- ընդհանուր մոտ՝ 150 ավտոկայանատեղի,
- լողավազան՝ 6x9x 1.60 չափերով՝ 86,4խմ ծավալով:

Համալիրն ունենալու է երկու ստորգետնյա հարկեր, որտեղ լինելու է ավտոկայանատեղի: Առաջին հարկը լինելու է ոչ բնակելի՝ հասարակական նշանակության, նախատեսվում են խանութներ, բանկեր, բուժ. կլինիկա և այլն: Ավտոկայանատեղի լինելու է նաև շենքի արտաքին հատվածում՝ 22 ավտոմեքենայի համար: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 1680քմ մակերեսով: Կանաչապատումը կատարվելու է Մասիսի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան:

Բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են գոյություն ունեցող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, շահագործման փուլում լողավազանի համար օգտագործվելու է խմելու ջուր՝ 86,4 մ3 ծավալով, օգտագործված ջուրը, ֆիլտրվելուց հետո օգտագործվելու է հրդեհաշիջման և տարածքի լվացման համար: Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան: Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Համալիրի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և

էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 36 ամիս՝ 3 տարի:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ՝ շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և մետաղական ջարդոնի մնացորդներ և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 250խմ ծավալով: Կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 17640կգ/տարի, շահագործման փուլում՝ 360000 կգ/տարի: Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- շինհրապարակը կցանկապատվի, կառուցվող շենքերը կծածկվեն համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,
- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,
- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը:

Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է՝

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը:

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է՝
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 1,1 մ3 չափերի:
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում:

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս՝ բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝

• համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
• բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
• բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
• տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Ձեռնարկողին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,
• խստիվ պահպանել շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը, հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության ապահովվում,
• թափոնների տեղափոխումը կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
• կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
• ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
• շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
• շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
• արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
• շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
• բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
• կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի [illegible]ության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 500,0 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. Արարատի մարզի մասիս համայնքում՝ Արգավանդ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Ներքին գործերի», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինարարության ընթացքում անհրաժեշտության դեպքում իրականացնել ջրցանի ծավալների ավելացում:
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները:
- Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էմ Ջի Է Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Արգավանդ բնակավայրի Սարալանջի 23 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Կարդան Հարությունյան